



COVID-19-ի դեմ Պատվաստանյութեր Պատանիների Համար ՀԱՃԱԽ ՏՐԿՈՂ ՀԱՐՑԵՐ ԾՆՈՂՆԵՐԻ ԵՎ ԽՆԱՄԱԿԱԼՆԵՐԻ ՀԱՄԱՐ



12-17 տարեկան պատանիներն այժմ իրավասու են պատվաստվել COVID-19-ի դեմ Pfizer-ի կողմից պատրաստված պատվաստանյութով:

Պատվաստումները միշտ անվճար են: Ոչ ձեռք, ոչ էլ ձեռք երեխային չեն տրվի ներգաղթի կարգավիճակի վերաբերյալ հարցեր:

Պատվաստում գտնելու համար այցելեք [VaccinateLACounty.com](https://www.vaccinate.lacounty.gov) կամ [VacunateLosAngeles.com](https://www.vacunatelosangeles.com) (իսպաներեն):

Ինչու՞ պետք է իմ երեխան պատվաստվի COVID-19-ի դեմ:

Համաճարակի սկզբից ի վեր Միացյալ Նահանգներում 0-17 տարեկան ավելի քան 4 միլիոն երեխայի COVID-19-ի թեստի պատասխանը եղել է դրական: Չնայած, որ COVID-19-ը երեխաների մոտ հաճախ ավելի մեղմ է ընթանում, քան մեծահասակների մոտ՝ որոշ երեխաներ կարող են COVID-19-ի հետևանքով լրջորեն հիվանդանալ կամ ունենալ առողջական տևական խնդիրներ: Ձեր երեխային պատվաստելը նվազեցնում է COVID-19-ի հարուցիչ վիրուսով ձեր երեխայի վարակվելու հավանականությունը: Պատվաստումը ձեր երեխային կպաշտպանի նաև Բազմահամակարգային Բորբոքային Համախտանիշից (MIS-C)՝ հազվագյուտ, բայց լուրջ առողջական խնդիր COVID-19-ով վարակված պատանիների շրջանում:

Վարակված երեխաները կարող են փոխանցել վիրուսը ուրիշներին, նույնիսկ եթե հիվանդ չեն: Պատվաստվելն օգնում է պաշտպանել ընկերներին և ընտանիքներին, ինչպես նաև համայնքի ավելի լայն զանգվածին: Սա ներառում է թույլ իմունային համակարգ ունեցող մարդկանց և մինչև 12 տարեկան երեխաներին պաշտպանելը, որոնք դեռևս չեն կարող պատվաստվել:

Ամբողջովին պատվաստվելուց հետո ձեր երեխայի համար ավելի ապահով կլինի ընկերների հետ զվարճանալը, սպորտով զբաղվելը կամ ճանապարհորդելը՝ տեսելու իր ընտանիքի անդամներին: Նրանցից չի պահանջվելու թեստ հանձնել սպորտով զբաղվելու համար: Նրանցից նաև չի պահանջվելու կարանտին պահպանել նահանգից դուրս մեկնելիս կամ, եթե իր ընկերը, ընտանիքի անդամը, ուսուցիչը կամ թիմակիցը վարակվում են COVID-19-ով:

COVID-19-ի դեմ ո՞ր պատվաստանյութով կարող է պատվաստվել իմ երեխան:

12-ից 17 տարեկան պատանիները կարող են պատվաստվել Pfizer պատվաստանյութով: COVID-19-ի դեմ Pfizer պատվաստանյութը հաստատված է Սննդամթերքի և Դեղամիջոցների Որակի Վերահսկման Վարչության (FDA) կողմից՝ 16 տարեկան և ավելի բարձր տարիքի անձանց մոտ COVID-19 հիվանդության կանխարգելման համար: Պատվաստանյութը թույլատրված է FDA-ի կողմից 12-17 տարեկան անձանց շրջանում արտակարգ իրավիճակներում օգտագործման համար:

Moderna և Johnson & Johnson պատվաստանյութերը տվյալ պահին թույլատրված են միայն 18 տարեկան և ավելի բարձր տարիքի անձանց համար: Moderna-ն ծրագրում է դիմել FDA-ին՝ թույլտվություն ստանալու 12-ից 17 տարեկաններին պատվաստել իրենց պատվաստանյութով: Johnson & Johnson-ը տվյալ պահին իրականացնում է իր պատվաստանյութի կլինիկական փորձարկումները 12-ից 17 տարեկանների շրջանում:

Պատվաստանյութերի մասին ավելի իմանալու համար տե՛ս Պատվաստվող Անձանց և Նրանց Խնամողների Տեղեկագիրը՝ [COVID-19-ի դեմ Pfizer-BioNTech պատվաստանյութ](#), [COVID-19-ի դեմ Moderna պատվաստանյութ](#) և [COVID-19-ի դեմ J&J/Janssen պատվաստանյութ](#):

Ինչու՞ է պատվաստանյութը նախատեսված միայն 12 տարեկան և ավելի բարձր տարիքի պատանիների համար: Ե՞րբ կկարողանան պատվաստվել ավելի փոքր տարիքի երեխաները:

12 տարեկանից փոքր երեխաները դեռևս չեն կարող պատվաստվել, քանի որ չկան բավարար տեղեկություններ այն մասին, թե ինչպես են ազդում պատվաստանյութերն այս տարիքային խմբի վրա: Կլինիկական





COVID-19-ի դեմ Պատվաստանյութեր Պատանիների Համար ՀԱՃԱԽ ՏՐԿՈՂ ՀԱՐՑԵՐ ԾՆՈՂՆԵՐԻ ԵՎ ԽՆԱՄԱԿԱԼՆԵՐԻ ՀԱՄԱՐ



ուսումնասիրությունները շարունակվում են իրականացվել 12 տարեկանից փոքր երեխաների շրջանում: Այդ փորձարկումների արդյունքներից կախված՝ ավելի փոքր տարիքային խմբեր կարող են իրավասու լինել պատվաստվել աշնան վերջում կամ ձմռան սկզբին:

Որտե՞ղ կարող եմ պատվաստել իմ երեխային:

Պատվաստումներն առաջարկվում են Լոս Անջելեսի Ծրջանի հարյուրավոր վայրերում, ներառյալ՝ COVID-19-ի դեմ պատվաստումների հատուկ վայրերը, կլինիկաները, դեղատները, դպրոցները և պատվաստումների ժամանակավոր տեղանքները: Պատվաստումների վայրերից շատերում ժամադրություն անհրաժեշտ չէ: Փնտրեք պատվաստման կլինիկա ձեր թաղամասում: Տանը պատվաստումը հասանելի է այն անձանց համար, որոնք չեն կարող դուրս գալ տնից: Ավելի իմանալու համար այցելեք [VaccinateLACounty.com](https://www.vaccinate.lacounty.gov) կայք և սեղմեք՝ <<[հնչպես Պատվաստվել](#)>>: Կարող եք զանգահարել նաև Պատվաստումների Չանգերի Կենտրոն 833-540-0473 հեռախոսահամարով: Այն գործում է ամեն օր առավոտյան 8-ից երեկոյան 8:30-ը: Եթե փնտրում եք պատվաստանյութ 12-17 տարեկանների համար, ընտրեք պատվաստման այնպիսի վայր, որն առաջարկում է Pfizer պատվաստանյութը:

Ի՞նչ փաստաթղթեր պետք է ներկայացնեմ իմ երեխային պատվաստելու համար:

12-ից 17 տարեկան պատանիներին պատվաստվելու համար անհրաժեշտ է տարիքը ապացուցող փաստաթուղթ և ծնողի կամ օրինական խնամակալի համաձայնությունը: Ընտանիքները պետք է պատվաստման նախատեսված վայրի հետ ճշտեն իրենց կողմից տրվող համաձայնության պահանջները: Կարող եք նաև ստուգել էլեկտրոնային նամակը կամ տեքստային հաղորդագրությունը, որը ստացել եք պատվաստման ժամադրությունը նշանակելիս՝ իմանալու, թե ինչ փաստաթղթեր են անհրաժեշտ բերել: Եթե գնում եք պատվաստման այնպիսի վայր, որտեղ ժամադրություն նշանակելու անհրաժեշտություն չկա, բերեք ձեր երեխայի տարիքը ապացուցող փաստաթուղթ: Լոս Անջելեսի Ծրջանի Հանրային Առողջության Վարչության պատվաստումների վայրերում ներկայացվող պահանջների մասին տեղեկություններ ստանալու համար այցելեք [VaccinateLACounty.com](https://www.vaccinate.lacounty.gov) կայք կամ զանգահարեք Պատվաստումների Չանգերի Կենտրոն (տե՛ս վերևում):

Արդյո՞ք 12-ից 17 տարեկան պատանիները պատվաստվում են ավելի քիչ դեղաչափով, քան չափահասները:

Ոչ: Pfizer պատվաստանյութի դեղաչափը նույնն է պատանիների (12-17 տարեկան) և մեծահասակների համար: Այն ներարկվում է 2 դեղաչափով՝ 21 օր տարբերությամբ: Պատվաստանյութից լիարժեք պաշտպանություն ստանալու համար կարևոր է ստանալ երկրորդ դեղաչափը: Ձեր երեխան համարվում է ամբողջովին պատվաստված երկրորդ դեղաչափը ստանալուց 2 շաբաթ անց:

Որո՞նք են կողմնակի ազդեցությունները պատանիների վրա:

Պատվաստանյութի կողմնակի ազդեցությունները երեխաների և մեծահասակների վրա միանման են: Դրանք կարող են ներառել ձեռքի ցավ, ջերմություն, հոգևածության զգացողություն, դող, գլխացավ և սրտխառնոց: Այս կողմնակի ազդեցությունները կարող են սահմանափակել որոշ առօրյա գործողություններ, սակայն դրանք կանհետանան մի քանի օրերի ընթացքում: Ոչ բոլորի մոտ են դրսևորվում կողմնակի ազդեցություններ: Կողմնակի ազդեցությունները բնական են և նշանակում են, որ մարմինը ստեղծում է դիմադրողականություն:

Կարո՞ղ է իմ երեխան պատվաստվել միաժամանակ COVID-19-ի և այլ հիվանդությունների դեմ:

Այո: 12 տարեկան և ավելի բարձր տարիքի երեխաները կարող են պատվաստվել ինչպես COVID-19-ի, այնպես էլ միաժամանակ այլ հիվանդությունների դեմ, ինչպիսիք են կարմրուկը և կապույտ հազը: Եթե ձեր երեխան պատվաստվում է COVID-19-ի դեմ այնպիսի վայրում, որտեղ չեն առաջարկվում իրեն անհրաժեշտ մյուս





COVID-19-ի դեմ Պատվաստանյութեր Պատանիների Համար ՀԱՃԱԽ ՏՐԿՈՂ ՀԱՐՑԵՐ ԾՆՈՂՆԵՐԻ ԵՎ ԽՆԱՄԱԿԱԼՆԵՐԻ ՀԱՄԱՐ



պատվաստումները, ապա դուք կարող եք ցանկացած պահի գնալ այլ վայր՝ պատվաստվելու այդ պատվաստանյութերով: Պատվաստանյութերը ստանալու միջակայքում սպասել անհրաժեշտ չէ:

Կարո՞ղ եմ ավերգիաներ ունեցող մարդիկ պատվաստվել COVID-19-ի դեմ:

Դա կախված է որոշակի հանգամանքներից.

- Բերանով ընդունվող դեղորայքից, մեղրից (ներառյալ ձվերը), լատեքսից, ընտանի կենդանիներից կամ ծաղկափոշուց ավերգիա ունեցող մարդիկ, կամ Նրանք, որոնք ունեն ավերգիայի ընտանեկան պատմություն, կարող են պատվաստվել: Պատվաստանյութերից որևէ մեկը չի պարունակում ձու, ժելատին, լատեքս կամ կոնսերվանտներ:
- Մարդիկ, որոնց մոտ դրսևորվել է ավերգիկ հակազդեցություն պատվաստանյութի կամ ներարկային բուժման նկատմամբ (նույնիսկ եթե ավերգիայի ծանր դրսևորում չի եղել), պետք է խոսեն բժշկի հետ՝ որոշելու, թե արդյոք անվտանգ է պատվաստվելը:
- Պոլիէթիլենգլիկոլից (PEG) ավերգիա ունեցող մարդիկ չպետք է պատվաստվեն Pfizer (COMIRNATY) կամ Moderna պատվաստանյութերով: Նրանք պետք է խոսեն բժշկի հետ՝ պարզելու, թե արդյոք կարող են պատվաստվել J&J պատվաստանյութով:
- Պոլիսորբատից ավերգիա ունեցող մարդիկ չպետք է պատվաստվեն J&J պատվաստանյութով: Նրանք պետք է խոսեն բժշկի հետ՝ պարզելու՝ արդյոք կարող են պատվաստվել Pfizer կամ Moderna պատվաստանյութերով:

Ներկա պահին 12-17 տարեկան պատանիները կարող են պատվաստվել միայն Pfizer պատվաստանյութով:

Ցանկացած պատվաստանյութի դեպքում առկա է անաֆիլաքսիայի (սուր ավերգիկ հակազդեցություն) դրսևորման փոքր վտանգ: Այդ պատճառով, COVID-19-ի դեմ պատվաստվելուց հետո բոլոր անձինք կարճ ժամանակով գտնվում են հոսկողության ներքո:

Ավերգիկ հակազդեցությունների մասին տեղեկությունները կարող են փոփոխվել: Մանրամասների և վերջին ուղեցույցը տեսնելու համար այցելեք CDC-ի [COVID-19-ի դեմ Պատվաստանյութերը Ավերգիա Ունեցող Մարդկանց Համար](#) կայքէջը և խոսեք բժշկի հետ:

Ի՞նչ են պարունակում պատվաստանյութերը:

Բաղադրիչների ամբողջական ցանկի համար տե՛ս Պատվաստվող Անձանց և Նրանց Խնամողների Տեղեկագիրը յուրաքանչյուր պատվաստանյութի համար՝ [COVID-19-ի դեմ Pfizer-BioNTech պատվաստանյութ](#), [COVID-19-ի դեմ Moderna պատվաստանյութ](#), և [COVID-19-ի դեմ J&J/Janssen պատվաստանյութ](#): Pfizer (COMIRNATY) կամ Moderna պատվաստանյութերը պարունակում են Պոլիէթիլենգլիկոլ (PEG), իսկ J&J պատվաստանյութը՝ պոլիսորբատ: Պատվաստանյութերից որևէ մեկը չի պարունակում ձու, ժելատին, լատեքս կամ կոնսերվանտներ:

Իմ երեխան արդեն վարակվել է COVID-19-ով, արդյո՞ք նա, այնուամենայնիվ, պետք է պատվաստվի:

Այո: Ձեր երեխան պետք է պատվաստվի, նույնիսկ եթե նա արդեն վարակվել է COVID-19-ով: Մենք դեռևս չգիտենք, թե COVID-19-ով վարակվելուց հետո անձը որքան ժամանակ է լինում պաշտպանված: Պատվաստվելը կխթանի նրա իմունային համակարգը և կտա ավելի լավ և երկարատև պաշտպանություն COVID-19-ի դեմ: Սա ներառում է պաշտպանություն վիրուսի այնպիսի տարբերակներից, որոնք կարող են ավելի վարակիչ լինել կամ ավելի լուրջ հիվանդության պատճառ դառնալ:

Արդյո՞ք 12-17 տարեկան երեխաների համար անվտանգ է պատվաստվելը:

Այո: Մանրամասն կլինիկական փորձարկումներից հետո COVID-19-ի դեմ Pfizer պատվաստանյութը՝ այն նույն պատվաստանյութը, որն անվտանգ կերպով ներարկվել է 16 տարեկան և ավելի բարձր տարիքի միլիոնավոր մարդկանց, մայիսին FDA-ի կողմից թույլատրվեց 12-17 տարեկան պատանիներին պատվաստելու համար: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ COVID-19-ի դեմ Pfizer պատվաստանյութը [անվտանգ](#) և





COVID-19-ի Դեմ Պատվաստանյութեր Պատանիների Համար ՀԱՃԱԽ ՏՐԿՈՂ ՀԱՐՑԵՐ ԾՆՈՂՆԵՐԻ ԵՎ ԽՆԱՄԱԿԱԼՆԵՐԻ ՀԱՄԱՐ



[արդյունավետ](#) է 12-ից 17 տարեկան երեխաների, ինչպես նաև մեծահասակների համար: Պատվաստանյութը տվյալ պահին ամբողջությամբ հաստատվել է FDA կողմից 18 տարեկան և բարձր տարիքի անձանց համար, և շարունակվում է պատվաստանյութի՝ անվտանգության նկատառումներով վերահսկումը:

Ծնողները պետք է տեղյակ լինեն Pfizer և Moderna պատվաստանյութերով պատվաստված անձանց մոտ սրտամկանի բորբոքման (միոկարդիտ) կամ սրտապարկի բորբոքման (պերիկարդիտ) մասին տրված հաղորդումներին: Այդպիսի հաղորդումները հազվադեպ են՝ հաշվի առնելով արդեն արված պատվաստումների դեղաչափերի քանակը: Դեպքերի մեծ մասը տեղի է ունեցել բարձր տարիքի արական սեռի դեռահասների և պատանիների մոտ, և հիմնականում պատվաստանյութի ներարկումից, առավել հաճախ՝ երկրորդ դեղաչափի ներարկումից մի քանի օր անց: Եթե ձեր երեխայի կամ որևէ այլ անձի մոտ ներարկումից հետո ի հայտ է եկել հետևյալ ախտանիշներից որևէ մեկը, խորհուրդ է տրվում անմիջապես դիմել բժշկական օգնության.

- Ցավ կրծքավանդակում
- Շնչարգելություն
- Արագ սրտխփոց, դող սրտում կամ սրտի ուժեղ բաբախում:

Միոկարդիտով և պերիկարդիտով հիվանդներից շատերի առողջական վիճակը, ովքեր ստացել են բուժօգնություն, բարելավվել է դեղամիջոցների և հանգստի միջոցով, և նրանք արագ լավացել են: Այդպիսի առողջական խնդիրներ ունեցողները, սովորաբար, կարող են վերադառնալ իրենց առօրյա գործունեությանը ախտանիշների բարելավումից հետո, սակայն նրանք պետք է խոսեն իրենց սրտաբանի (կարդիոլոգ) հետ՝ նախքան մարզվելը կամ սպորտին վերադառնալը: Կարևոր է նշել, որ միոկարդիտը և պերիկարդիտը առավել տարածված են այն մարդկանց շրջանում, որոնք վարակվում են COVID-19-ով, իսկ սրտի համար վտանգները կարող են ավելի ծանր լինել COVID-19 վարակից: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք CDC-ի [mRNA COVID-19-ի Դեմ Պատվաստմանը Հատուկ Միոկարդիտ և Պերիկարդիտ](#) կայքէջը:

Հազվադեպ կողմնակի ազդեցություններից է նաև անաֆիլաքսիան: Այն սուր ալերգիկ հակազդեցություն է, որը կարող է առաջանալ ցանկացած պատվաստումից հետո: COVID-19-ի դեմ պատվաստվելուց հետո բոլոր անձինք կարճ ժամանակով գտնվում են հսկողության ներքո, որպեսզի անաֆիլաքսիայի դեպքում այն հնարավոր լինի անմիջապես բուժել: Իմացեք ավելին CDC-ի՝ [Ինչ Անել, Եթե Ձեզ Մոտ Առաջացել Ե Ալերգիկ Հակազդեցություն COVID-19-ի Դեմ Պատվաստվելուց Հետո](#) կայքէջը:

CDC-ն շարունակում է առաջարկել [COVID-19-ի դեմ պատվաստում](#) 12 տարեկան և ավելի բարձր տարիքի յուրաքանչյուր անձի: COVID-19 հիվանդության հայտնի վտանգները և դրա հետ կապված հնարավոր ծանր բարդությունները (ինչպես օրինակ՝ առողջական երկարաժամկետ խնդիրներ, հոսպիտալացում և նոյնիսկ մահ) անհամեմատ գերազանցում են պատվաստման արդյունքում հազվադեպ բացասական հակազդեցության հնարավոր վտանգները, ներառյալ միոկարդիտը կամ պերիկարդիտը:

Արդյո՞ք իմ երեխան պատվաստումից կարող է վարակվել COVID-19-ով:

Ձեր երեխան չի կարող պատվաստանյութից վարակվել COVID-19-ով: Դա հնարավոր չէ, քանի որ Միացյալ Նահանգներում օգտագործվող պատվաստանյութերից ոչ մեկը (ներառյալ Pfizer պատվաստանյութը) չի պարունակում COVID-19-ի հարուցիչ վիրուսը որևէ ձևով:

Արդյո՞ք պատվաստանյութն առաջացնում է անպտղություն:

Չկա կենսաբանական պատճառ կամ որևէ ապացույց, որը ցույց է տալիս, որ ցանկացած պատվաստանյութ, ներառյալ՝ COVID-19-ի դեմ պատվաստանյութերը, առաջացնում են պտղաբերության հետ կապված խնդիրներ կանանց կամ տղամարդկանց մոտ: COVID-19-ի դեմ պատվաստանյութի կլինիկական փորձարկումներին մասնակցած և պատվաստված որոշ մարդիկ, և շատ մարդիկ, ովքեր պատվաստվել են փորձարկումներից հետո, հղիացել են: Պատվաստանյութերը չեն փոխում մարդու ԴՆԹ-ն, և չկա որևէ ապացույց, որ դրանք ազդում են դեռահասի զարգացման վրա:





COVID-19-ի Դեմ Պատվաստանյութեր Պատանիների Համար ՀԱՃԱԽ ՏՐԿՈՂ ՀԱՐՑԵՐ ԾՆՈՂՆԵՐԻ ԵՎ ԽՆԱՄԱԿԱԼՆԵՐԻ ՀԱՄԱՐ



Կարո՞ղ է COVID-19-ի դեմ պատվաստանյութը ազդել իմ երեխայի դաշտանային շրջափուլի (ցիկլ) վրա:
Որոշ մարդիկ հայտնել են պատվաստվելուց հետո իրենց դաշտանային շրջափուլի փոփոխության մասին, ներառյալ՝ ավելի մեծ հոսք և ցավոտ կծկումներ: Մենք դեռևս չգիտենք՝ արդյոք այս փոփոխությունները պայմանավորված են պատվաստանյութով, թե ոչ. դաշտանային շրջափուլի փոփոխություններ չեն արձանագրվել պատվաստանյութերի փորձարկումների ընթացքում, և այս հարցի վերաբերյալ դեռևս ուսումնասիրությունների արդյունքներ չկան: Կարևոր է հիշել, որ շատ բաներ կարող են փոփոխություն առաջացնել դաշտանային շրջափուլերում, ինչպես օրինակ՝ լարվածությունը, և քնի, դիետայի, ֆիզիկական վարժությունների փոփոխությունները, ինչպես նաև որոշ դեղամիջոցները և անկանոն շրջափուլերը դեռահասների շրջանում շատ տարածված են: Եթե ձեր երեխան ունի մտահոգություններ՝ կապված իր դաշտանային շրջափուլի հետ, խորհուրդ է տրվում, որ նա խոսի իր բժշկի հետ:

Արդյո՞ք COVID-19-ի դեմ պատվաստումը կառաջացնի տևական կողմնակի ազդեցություններ իմ երեխայի մոտ:

Ցանկացած պատվաստմանը հաջորդող երկարատև կողմնակի ազդեցությունները շատ հազվադեպ են: Ելնելով նրանից, թե մենք ինչ գիտենք այլ պատվաստանյութերի մասին, դրսևորվող ցանկացած հազվագյուտ, տևական կողմնակի ազդեցություն, սովորաբար, ի հայտ է գալիս պատվաստմանը հաջորդող վեց շաբաթվա ընթացքում: Այդ պատճառով, Մևնդամթերթի և Դեղորայքի Վերահսկողության Վարչությունը (FDA), Նախքան նրանց օգտագործման թույլտվությունը տալը պահանջեց, որպեսզի COVID-19-ի դեմ բոլոր պատվաստանյութերը ուսումնասիրվեն վերջին դեղաչափից հետո առնվազն ութ շաբաթ: CDC-ն շարունակում է վերահսկել COVID-19-ի դեմ պատվաստանյութերը դրանց թույլտվությունից հետո, քանի որ դրանք ներարկվում են ավելի ու ավելի շատ մարդկանց: Ցանկացած պատվաստանյութի հետ կապված անվտանգության խնդիր հայտնաբերվելու դեպքում FDA-ն և պատվաստանյութն արտադրողը համագործակցում են անվտանգության հետ կապված խնդիրները լուծելու համար (օրինակ՝ հատուկ խմբաբանակի հետ կապված խնդիր, արտադրական խնդիր կամ պատվաստանյութի հետ կապված խնդիր):

Եթե պատվաստվելուց հետո իմ երեխայն ունենում է բացասական հակազդեցություն (հնարավոր կողմնակի ազդեցություն), ինչպե՞ս կարող եմ հայտնել դրա մասին:

Եթե պատվաստվելուց հետո ձեր երեխայի մոտ դրսևորվել է բացասական հակազդեցություն, խոսեք ձեր բժշկի հետ և հակազդեցության մասին հաղորդեք Պատվաստանյութերի Բացասական Հետևանքների Հաղորդման Համակարգին (կամ VAERS): Հայտնեք այդ մասին, նույնիսկ եթե վստահ չեք, որ դա առաջացել է պատվաստման հետևանքով: VAERS-ը վաղ նախագուշացման համակարգ է, որն օգտագործվում է FDA-ի և CDC-ի կողմից ցանկացած պատվաստանյութի հետ կապված անվտանգության հնարավոր խնդիրներ գտնելու համար: Հաղորդելու համար զանգահարեք 1-800-822-7967 հեռախոսահամարով կամ այցելեք <https://vaers.hhs.gov/reportevent.html>:

Եթե ունեք բջջային հեռախոս, կարող եք օգնել CDC-ին վերահսկել պատվաստումները՝ գրանցելով ձեր երեխային [V-Safe](#)-ում: **V-safe**-ը բջջային հեռախոսներով աշխատող <<գործիք>> է, որը տեքստային հաղորդագրություններ է ուղարկում պատվաստումից հետո՝ ձեր երեխայի առողջական վիճակը ստուգելու համար: Յուրաքանչյուր երեխա պետք է գրանցվի առանձին: Բոլոր **v-safe** ապահով տեքստային հաղորդագրություններն անմիջապես ուղարկվում են ծնողի կամ խնամակալի հեռախոսին:

VAERS-ը և V-safe-ը չպետք է օգտագործվեն բժշկական խորհրդատվություն ստանալու համար: Եթե COVID-19-ի դեմ պատվաստվելուց հետո ձեր երեխան ունի ախտանիշներ կամ առողջական խնդիրներ, որոնք անհանգստացնում են ձեզ, խնդրում ենք զանգահարել ձեր բժշկին կամ դիմել բուժօգնության:

Ինչպե՞ս գրուցեմ իմ երեխայի հետ COVID-19-ի դեմ պատվաստման մասին:

Պատանիների համար կարևոր է իմանալ փաստեր COVID-19-ի դեմ պատվաստման վերաբերյալ:





COVID-19-ի Դեմ Պատվաստանյութեր Պատանիների Համար ՀԱՃԱԽ ՏՐԿՈՂ ՀԱՐՑԵՐ ԾՆՈՂՆԵՐԻ ԵՎ ԽՆԱՄԱԿԱԼՆԵՐԻ ՀԱՄԱՐ



Համացանցում և սոցիալական կայքերում կան շատ ապատեղեկություններ COVID-19-ի և պատվաստանյութերի մասին: Խոսեք ձեր երեխաների հետ COVID-19-ի մասին և պատասխանեք նրանց յուրաքանչյուր հարցին:

Տեղեկացրեք նրանց առողջության վտանգների մասին, երբ որևէ մեկը վարակվում է COVID-19-ով, և՛ ինչպես պատվաստանյութը կարող է օգնել պաշտպանել նրանց: Բացատրեք, որ պատվաստանյութն անվտանգ է և չի պարունակում վիրուս: Խոսեք նրանց հետ կողմնակի ազդեցությունների մասին և տեղեկացրեք, որ կողմնակի ազդեցությունները բնական երևույթ են: Պատվաստվելիս հանգստացրեք նրանց, եթե նյարդային են:

Հիշեցրեք նրանց, որ պատվաստվելը կօգնի պաշտպանել իրենց ընտանիքի անդամներին և ընկերներին: Այն նաև անվտանգ կդարձնի նրանց համար սպորտով զբաղվելը, ընկերների հետ զվարճանալը և ընտանիքի անդամին այցելելը:

Եթե նրանք ունենան հարցեր կամ մտահոգություններ, լավ կլինի, որ նրանք խոսեն լավ տեղեկացված, վստահելի անձնավորության, օրինակ՝ ընտանեկան բժշկի կամ մանկաբույժի հետ:

